ԿԵՆԴԱՆԻ ՋՐԵՐԻ ԳԵՏԵՐ

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐ. ՀՈՎՀԱՆՆԵՍ 7.37-39

*37 Եվ տոնի վերջին մեծ օրը Հիսուսը կանգնած էր և աղաղակում էր՝ ասելով. Եթե մեկը ծարավ է, թող ինձ մոտ գա ու խմի: 38 Ինչպես Գիրքն է ասում. Ով ինձ **հավատում է,** նրա **ներսից կենդանի ջրերի գետեր պիտի բխեն**: 39 Նա այս ասաց՝ նկատի ունենալով Սուրբ Հոգուն, որն **ընդունելու էին** նրան հավատացողները, որովհետև Սուրբ Հոգին դեռևս չունեին, քանի որ Հիսուսը դեռ փառավորված չէր:*

Որքա՞ն ծարավ ես դու

Հիսուսն ասաց. «Երանի նրանց, ովքեր քաղցած ու ծարավ են արդարության, որովհետև նրանք պիտի հագենան» (Մատթեոս 5.6):

- *Աստված լցնում է քաղցածներին:*
- *պատասխանում է ծարավներին:*
- *Թափում է իր Հոգին այնտեղ, որտեղ տեղ են բացել Նրա համար:*

I. ՀԻՍՈՒՍԻ ԱՂԱՂԱԿԸ. ԿԱՆՉ ԾԱՐԱՎՆԵՐԻՆ

- ***Ծարավը խոսում է կարիքի, դատարկության, փափագի և հուսահատության մասին:***

  «<u>ԵԹԵ</u> մեկը ծարավ է, թող ինձ մոտ գա ու խմի»:

*Դավիթը աղաղակում էր. «“Ինչպես եղջերուն է փափագում ջրի առուներին, այնպես էլ **իմ անձը** փափագում է քեզ, ո՜վ Աստված (Սաղմոս 42.1-2):*

Եսային աղաղակում էր. «Ո՛վ բոլոր ծարավներ, եկե՛ք ջրերի մոտ» (Եսայիա 55.1):

«Ես ջուր պիտի թափեմ ծարավի վրա... իմ Հոգին՝ քո սերնդի վրա» Եսայիա 44.3

*Հովհաննես 4.10 – Եթե իմանայիր Աստծու պարգևը, և թե ո՞վ է նա, որ քեզ ասում է՝ "Ինձ խմելու ջո՛ւր տուր, ապա դո՛ւ **նրանից կխնդրեիր,** նա էլ քեզ **կենդանի ջուր** կտար:*

Սամարացի կնոջը Նա ասաց. «Ով խմի այն ջրից, որ ես նրան կտամ, հավիտյան չի ծարավի» (Հով. 4.13-14):

II. ՀՐԱՎԵՐԸ. ԹՈՂ ԻՆՁ ՄՈՏ ԳԱ ՈՒ ԽՄԻ.

Ելից 17.6 – Ահա այնտեղ՝ Քորեբի ժայռի վրա, կկանգնեմ քո առջև. դու կհարվածես ժայռին, դրանից ջուր դուրս կգա, և ժողովուրդը կխմի:

*Ա Կոր.10.4 – Բոլորն էլ նույն հոգևոր ըմպելիքը խմեցին, որովհետև այն հոգևոր վեմից էին խմում, որ նրանց հետ էր գնում, և **այդ Վեմը Քրիստոսն էր:***

Այսօր այդ կենդանի ջուրը լցվում է Քրիստոս Վեմից քո մեջ և քո միջից հոսում դուրս:

III.ԽՈՍՏՈՒՄԸ. ՈՉ ԹԵ ՋՐԻ ԿԱԹԻԼՆԵՐ, ԱՅԼ

38 ***ՁԵՐ ՆԵՐՍԻՑ*** *կենդանի ջրերի* ***ԳԵՏԵՐ*** *պիտի բխեն*

- ***Տաճարից հոսող գետը – Կյանքը Ներսից դեպի դուրս (Եզեկիել 47.1–12)***

  Եզեկիելը տեսավ տեսիլք՝ ջուր հոսում էր տաճարի շեմքից: Սկզբում՝ մի փոքր հոսք էր, հետո հասնում էր ծնկներին, գոտկատեղին, մինչև որ դարձավ գետ, որը ոչ ոք չէր կարող անցնել:

  «Մաքուր ջուր պիտի ցողեմ ձեզ վրա... և իմ Հոգին պիտի դնեմ ձեր մեջ» Եզեկիել 36.25–27

- ***Այս խոստումը կատարվեց Պենտեկոստեի օրը (Գործք 2.1–4):***

- ***Պետրոսն ասաց. «Ապաշխարեցե՛ք, և դուք կստանաք Սուրբ Հոգու պարգևը» (Գործք 2.38):***

  Գործք. 2.39 – Որովհետև այս խոստումը ***ձեզ****,* ***ձեր*** *զավակների և* ***բոլոր այն հեռավորների*** *համար է, որոնց մեր Տեր Աստվածը կանչելու է:*

  Գործք 8.17 – ***17*** *Այն ժամանակ ձեռքերը դրեցին նրանց վրա, և* ***<u>նրանք ընդունում էին Սուրբ Հոգին</u>****:*

*Գործք 10.44-48 – Եվ Պետրոսը դեռ այս բանը խոսելիս Սուրբ **Հոգին իջավ** այն խոսքը լսողների **բոլորի վրա:** Եվ զարմացան Պետրոսի հետ եկող հավատացյալները, որ թլփատությունից էին, որ հեթանոսների մեջ էլ Սուրբ Հոգու պարգևը թափվում էր: Որովհետև լսում էին, որ նրանք լեզուներով խոսում և Աստծուն փառավորում էին: ...Սուրբ Հոգին ընդունեցին ինչպես և մենք:*

«Ես իմ Հոգին պիտի թափեմ ամեն մարմնի վրա» (Հովել 2.28, Գործք 2.17):

Հիսուսը դեռ կանգնած է և դեռ աղաղակում է.

«ԵԹԵ մեկը ծարավ է, թող ինձ մոտ գա ու խմի»:

«Տե՛ր Հիսուս, մենք գալիս ենք ծարավ: Նորից լցրու մեզ Քո Սուրբ Հոգով: Թող կենդանի ջրերի գետեր հոսեն մեր սրտերից Քո փառքի համար: Ամեն»:

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ